ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 765-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2025 թվականի N ____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 765-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդի (գովազդային վահանակի) տեղադրման, ինչպես նաև ապօրինի տեղադրված գովազդային վահանակի ապամոնտաժման կարգը սահմանելու մասին» N 765-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝

ա. Նախաբանի «վահանակների վրա» բառերից հետո լրացնել «, բացառությամբ 18-րդ և 18.3-րդ կետերի դրույթների» բառերը.

բ. 8-րդ կետի «ավարտի մասին,» բառերից հետո լրացնել «ներկայացնելով ճանապարհը տնօրինող մարմնի հետ կնքված գովազդի (գովազդային

վահանակի) սպասարկման պայմանագիրը,» բառերը.

գ.8.2-րդ կետի «Երկարաձգելու դիմումը» բառերից հետո լրացնել «և ճանապարհը տնօրինող մարմնի հետ կնքված գովազդի (գովազդային վահանակի) սպասարկման պայմանագիրը» բառերը.

դ. 18-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ «18.Գովազդակիր կազմակերպությունը պետք է ապահովի գովազգային պաստառի, գովազդային վահանակի և նրա պաշտպանիչ ինժեներական կառույցի բաղադրիչների պատշաճ վիճակը (ժամանակին ներկել, փոխել պատռված պաստառը և այրված լամպերը, նորոգել վնասված բաղադրիչները)։ Սույն պարտավորությունների կատարումը կանոնակարգվում է գովազդակիր կազմակերպության և տվյալ ճանապարհը տնօրինող մարմնի հետ կնքված գովազդի (գովազդային վահանակի) սպասարկման պայմանագրով, որը առնվազն պետք է ներառի գովազդակիր կազմակերպության պարտավորությունները վահանակի պատշաճ տեսքի պահպանման համար կատարվող պատադիր աշխատանքների (վահանակի և պաշտպանիչ ինժեներական կառույցների ներկում և այլ ընթացիկ գործողություններ) պարբերականություն, ինչպես նաև նշված պարբերականությունից դուրս՝ տարբեր պատճառներով գովազդային վահանակի, պաշտպանիչ ինժեներական կառույցների, գովազդային պաստառի և նրա լուսավորության տարրերի վնասվածքները նորոգելու ժամկետներ վերաբերյալ։».

ե.18-րդ կետից հետո լրացնել 18.1-րդ, 18.2-րդ, 18.3-րդ և 18.4-րդ կետերը հետևյալ բովանդակությամբ.

«18.1. Գովազդի (գովազդային վահանակի) սպասարկման պայմանագիրը կնքվում է 5 տարի ժամկետով, որի պատճենը ներկայացվում է լիազոր մարմնին գովազդային վահանակի տեխնիկական պայմաններին համապատասխանության ակտ ստանալու սույն կարգի 8-րդ կետով սահմանված գրավոր տեղեկացման հետ, կամ, գովազդային վահանակի տեղադրման թույլտվությունը ամեն անգամ մեկ տարի երկարաձգելու դեպքում՝ մեկ տարի ժամկետով, որի պատճենը լիազոր մարմնին ներկայացվում է սույն կարգի 8.2 կետով սահմանված դիմումի հետ։

18.2. Սահմանել, որ.

ա) գովազդի (գովազդային վահանակի) սպասարկման պայմանագրի բացակայության դեպքում լիազոր մարմնի կողմից գովազդային վահանակի տեխնիկական պայմաններին համապատասխանության ակտ չի տրամադրվում կամ մերժվում է գովազդակիր կազմակերպության՝ գովազդային վահանակի տեղադրման թույլտվությունը մեկ տարի երկարաձգելու դիմումը։

բ) գովազդի (գովազդային վահանակի) սպասարկման պայմանագրի ձևը սահմանում է ճանապարհը տնօրինող մարմինը։

18.3. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին մինչև սույն կարգի ուժի մեջ մտնելը տեղադրված գովազդային վահանակների սպասարկման պայմանագրերը կնքվում են անժամկետ։

18.4. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին մինչև սույն կարգի 18-րդ կետի ուժի մեջ մտնելը տեղադրված գովազդային վահանակների սպասարկման պայմանագրերը կնքվում են մինչև լիազոր մարմնի կողմից տրամադրված թույլտվության ժամկետի ավարտը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման «ա» կետի և 18.3-րդ, 18.4-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**